

Արփի Ս. Մուրադյան

## ԱՆԳԼԻԱԳԻՐ ՀԱՅ ԳՐՈՂԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵԼԻՆ

Լևոն-Զավեն Սյուրմեյան, – «98,6<sup>0</sup> ըստ Ֆորենհայթի»\*

Մուտք

Այս ստեղծագործությունը Լ.-Զ. Սյուրմեյանի երկրորդ վեպն է, որ թեև գրվել է 1945-ին հաջորդած չորս տարիներում և տպագրվել է 1950 թվականին<sup>1</sup>, սակայն իր նախորդ՝ «Ձեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք» վեպի նման հայ ընթերցողին մատչելի է դարձել բավական ուշացումով՝ ավելի քան կես դար հետո՝ 2005 թվականին<sup>2</sup>:

Վեպը գրվել է այն ժամանակ, երբ նրա հեղինակը թե՛ որպես հայ

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 10.02.2013:

1 Լ.-Զ. Սյուրմեյանը (1905 - 2005) ծնվել է Տրապիզոնում: Տասը տարեկանում Մեծ եղեռնի հետևանքով գրկվում է ծնողներից, ինքն էլ հրաշքով է փրկվում մահից, անցնում որբության ճանապարհներով: Սովորում է Արմաշի գյուղատնտեսական վարժարանում, որը տեղափոխվում է Հայաստան: Իր բախտակից աշակերտների հետ լինում է Գավառում, Վանաձորում, Բաթումում, Թիֆլիսում, Ռոստովում, Եյսկում և այլուր: Հայաստանի առաջին Հանրապետության կործանումից հետո հայտնվում է Կ. Պոլսում, որի Կեդրոնական վարժարանում աշակերտում է Վ. Թեքեյանին ու Հ. Օշականին: Նրանք, գնահատելով պատանու բանաստեղծությունները, գրական մեծ ապագա են խոստանում ակնկալելով, որ նա կարող է փոխարինել Եղեռնին զոհ գնացած արևմտահայ բանաստեղծներից մեկին: Սակայն պատանին ընտրում է այլ ճանապարհ: Գյուղատնտեսի մասնագիտություն ստանալով՝ Հայաստան վերադառնալու և նրա բարգավաճմանը ծառայելու նպատակով նա մեկնում է ԱՄՆ ու մինչև կյանքի վերջը մնում այնտեղ: 1924 թ. Վ. Թեքեյանը հրատարակում է Լ.-Զ. Սյուրմեյանի հայերեն քերթվածների «Լույս Զվարթ» ժողովածուն, որը, ցավոք, միակը եղավ, որովհետև Ամերիկայում նա ծանր հիվանդանում է թոքախտով և չորս տարի տառապում է տարբեր հիվանդանոց-առողջարաններում: Այնուհետև՝ սովորելով Քանզասի և Կալիֆորնիայի համալսարաններում, հմտանում է անգլերենին և 1945 թ. հանրահայտ է դառնում իր «Ձեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք» վեպով: 1950 թ. լույս է տեսել նրա երկրորդ վեպը՝ «98, 6<sup>0</sup> ըստ Ֆորենհայթի»:

Վերնագիրն ակնարկում էր մարդու բնական ջերմաստիճանը, իսկ վեպը՝ հեղինակի հիվանդության ու բուժման ընթացքի գեղարվեստական պատմությունն է: Այն հայերեն լույս է տեսել 2005 թ. Արամ Արսենյանի թարգմանությամբ: 2 Տե՛ս Սյուրմեյան Լ.-Զ., 98,6<sup>0</sup> ըստ Ֆորենհայթի, ՀԳՄ հրատ., Եր., 2005, 364 էջ, թրգմ.՝ Ա. Արսենյան:

մարդ ու Ամերիկայի քաղաքացի և թե՛ որպես գրող-արվեստագետ արդեն ամերիկանացած էր, ուներ համաշխարհային դասական ու ժամանակակից գրականության, առհասարակ՝ գրական մշակույթի պատմության ամենալայն իմացություն և վիպելու արվեստի որոշակի փորձառություն: Սակայն դեռևս չէր խորացել վիպագրության ու մանավանդ՝ պատումի արվեստի հարցերի գիտատեսական քննության մեջ այնքան, որքան դա արել է հետագայում՝ 1968 թ. լույս տեսած «Արձակի տեխնիկա. չափ և խնթություն» խոր, լայն և ըստ ամենայնի՝ ընդգրկուն և շատ կողմերով ուսանելի գրքում:

Ուստի որքան որ ճիշտ է «98, 6<sup>0</sup> ըստ Ֆորենհայթի» վեպը այդ նշանավոր գրքի գիտական հասկացություններով ու բանաձևումներով վերլուծելն ու արժևորելը, նույնքան էլ սխալ կլինի ամեն ինչ նույն այդ գրքի չափանիշներին ու պահանջներին ենթարկելը, քանի որ այդ երկուսի միջև ընկած է շուրջ երկու տասնամյակի հեռավորություն: Չենք կարծում, թե Լ.-Ջ. Սյուրմեյանի գրական հայացքներում գոնե մասնակի տարբերություններ առաջացած չլինեն: Իսկ սա բարդացնում է այն ուսումնասիրողի գործը, որը ջանում է ժանրային, կառուցվածքային ու գեղարվեստական յուրահատկությունների բացահայտումով հասնել գիտատեսական ընդհանրացման ու եզրահանգումների:

### 1. Հոգեբանական նոր կենսապատում՝ գեղագետի հայացքով

**Իր մի շարք յուրահատկություններով այս ստեղծագործությունը ինքնակենսագրական վեպի նոր տարատեսակ է:** Այստեղ չի պահպանված իրական և գեղարվեստական ժամանակների այն համապատասխանությունը, որ կար նախորդ վեպում: Բոլոր դեպքերում Լ.-Ջ. Սյուրմեյանը գրել է արդիական հոգեբանական վեպ, իր կյանքի պատմությունը՝ **պատմություն և տեսարան** հասկացությունների, այուժետային կառուցվածքի և ֆարսուլայի, գործողության և կերպարների, պատմողի դեմքերի հաջորդափոխության իր իսկ ըմբռնումներով: Ընդ որում, ամբողջ վիպական հյուսվածքում գործողությունների, նկարագրությունների, երկխոսությունների համեմատությամբ ակնհայտ գերակշռություն ունեն առաջին կամ երրորդ դեմքով հանդես բերված հերոսների ներքին մենախոսությունները: Այս գրելաձևը, պատկերավորման ոճական նման էական հատկանիշն է Լ.-Ջ. Սյուրմեյանի երկը տարբերակում ինքնակենսագրական մյուս վեպերից, և տվյալ հանգամանքը մեզ հիմք է տալիս պայմանականորեն այն որակելու որպես ինքնակենսագրական վեպի նոր տարատեսակ:

Բնական հարց կարող է ծագել. որպես ինքնակենսագրական վեպ՝ ինչո՞վ է տարբերվում նախորդից: Թերևս նրանով, որ նրա էջերում հայկական կյանք ու միջավայր չի պատկերվում, գլխավոր կամ կենտրոնական հերոսը հայ հեղինակը չէ, այլ իռլանդացի Դանիել Մուրը՝ թոքախտավորների հիվանդանոց-ամողջարաններում շրջապատված շուրջ քսան ազգի պատկանող այլ հերոսներով՝ հիվանդներով ու բժիշկներով:

Ուրեմն ինչ կապ ունի այս վեպը հայ իրականության և Լ.-Ջ. Սյուրմեյ-

յանի կենսագրության հետ:

«98,6<sup>0</sup> ըստ Ֆորենհայթի» վեպի կառուցվածքային գլխավոր յուրահատկություններից մեկն այն է, որ ունի ցայտունորեն արտահայտված մեկ գլխավոր սյուժետային գիծ իր օժանդակներով, և, ինչպես ուրիշ ինքնակենսագրական ու կենսագրական վեպերում, առանցքային հերոսին առնչակցվում են նրան հարստացնող դիպաշարային այլ հերոսներ ու գործողություններ: Սակայն **այս վեպում էականը ոչ թե ակնառու, ցայտունորեն ընդգծված գործողություններն են, այլ հերոսների ներաշխարհի ներքնասույզ հոգեբանական բացահայտումները, որոնք փիլիսոփայական խորք ու գեղագիտական հմայք են տալիս ստեղծագործությանը՝ որպես գեղարվեստական յուրահատուկ միավորի:**

Գործողության առանցքը իրադարձությունների կենտրոնում առկա, երբեմն երրորդ, երբեմն առաջին դեմքով ներկայացող և հեղինակի հետ նույնացած իռլանդացի գլխավոր հերոսն է, որը, շրջապատված բազմաթիվ երկրորդական կերպարներով, անցնում է բազում փորձությունների բովով, կամքի ուժով հաղթահարում բոլոր դժվարություններն ու ճակատագրի հեգնանքը և իր ապրելու տենչով ու կամքով, բարոյահոգեբանական ներքին ուժով մահին հաղթելով՝ վերադառնում է կյանք:

**Արդեն իր նախորդ վեպում մի անգամ Լ.-Ջ.Սյուրմեյանը հայի ցավը պատմել էր հայի անունից, քննել մահվան դեմ հաղթանակ տարած հայության ճակատագիրը 20-րդ դարի ողբերգական իրադարձությունների համապատկերում: Երկրորդ վեպում նա քննել է օտար միջավայրում սահմանային էքզիստենցիալ իրավիճակում հայտնված թոքախտավոր մարդու ճակատագիրը:** Իսկ թոքախտը «ազգային հիվանդություն» չէ և կարող է բռնել ցանկացած ազգի ներկայացուցչի:

Այն գիտակցությունը, որ զուտ մարդկային ցավը համընդհանուր է և ազգություն չի ճանաչում, ինչպես թոքախտը, Լ.-Ջ. Սյուրմեյանին նպատակամղել է հյուսելու և ներկայացնելու իր մարդկային ցավի պատմությունը ուրիշի միջոցով: Սակայն ցավի գեղարվեստականացման մեկնակետը ընդհանուր փիլիսոփայական է, անձնական ու միաժամանակ՝ հայկական: Այսինքն՝ այս դեպքում միավորված են հանդես գալիս իռլանդացի հերոս Դանիել Մուրն ու վեպի հայ հեղինակը:

Լ.-Ջ. Սյուրմեյանի կենսագրությանը ծանոթ ամեն մի ընթերցող էլ կնկատի, որ Դանիել Մուրի թոքախտով հիվանդության, նրա տառապալից բուժման և մահվան միջով անցնելով՝ հաստատակամորեն դեպի կյանք քայլելու պատմությունը հենց հայ մարդունն է՝ Սյուրմեյանինը: Եվ ինչպես նախորդ՝ «Ձեզ եմ դիմում...» վեպում, Եղեռնի մղձավանջից հարություն առած ու չմեռնելով՝ թշնամուն «խաղի բերած» (սա Վ. Սարոյանի բնորոշումն է – Ա. Մ.) հայ որբերի ճակատագիրն է լուծվում դրական ելքով, այդպես էլ այս երկում վիպականացած հերոսինը՝ իռլանդացի Դանիել Մուրինը, որն անցնում է թոքախտավորների առողջարան հորջորջված կիսաբանտային ճամբարներով, ինչպես հայության բեկորներն էին փրկվել Եղեռնի դժոխսաճամբարներից:

Այս ընդհանուր երևույթի բացահայտման ու գնահատման առումով կարևոր ենք համարում պրոֆ Ս. Դանիելյանի մի կողմնորոշիչ դիտար-

ԳՐԱԿԱՆ ԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
Ե (ԺԱ) ԳՊՐԻ, ԹԻՎ 1 (41) ԽՈՒՎԱՐ-ՄԱՍԻՐ, 2013  
ՎԷՄ՝ ԽԱՆՏԻՎԱԿԱՆ ԽԱՆՈՒՐԵՆ

կումը Լ.-Ջ. Սյուրմեյանի երկու վեպերի տիպաբանական ընդհանրությունների մասին. «Նկատենք, որ երկու վեպերի պարագայում հերոսի՝ նոր կյանք վերադարձը գոհողությունների, կորուստների ճանապարհով՝ դառնում է տիպաբանական ընդհանրություն: Ցավն ու բալասանը ճանաչողության գլխավոր պատուհան են. մի դեպքում ժողովրդի հավաքական ձիգն է՝ դեպի լինելիություն, գոյատևման ձգտում՝ անծանոթ միջավայրերում, կորուստներից խոր իմաստնացում, մյուսում՝ անհատի վերադարձի, անձի լինելիության երջանկության խորհուրդների, կյանքի և մահվան հարաբերակցության փիլիսոփայական քննության սահմանը»<sup>3</sup>:

Վիպաբանական այս ընդհանրություններից բացի՝ կան նաև երկրորդական թվացող, այսպես կոչված՝ «կողմնակի փաստեր», որոնք հիմնավորում են նման դիտարկումները:

Անցյալ դարում թոքախտը դեռևս դժվար բուժելի կամ գրեթե անբուժելի հիվանդություն էր: Այդ զարհուրելի ախտի ծագումնաբանության, վարակի տարբեր աստիճանների ու բուժման փուլերի գրեթե մասնագիտական իմացությամբ միայն կարող էր գրողը ձեռնամուխ լինել այդպիսի վեպի ստեղծմանը: Եվ ահա նա խորանում է թոքախտի առաջացման կամ վարակման պատմության մեջ ու պարզում, որ այդ հիվանդությունը ժառանգական չէ, այլ ձեռքբերովի, և նրա հյուծիչ ու կործանող բացիլները մարդկանց մեջ տարածվում են հիմնականում թքի միջոցով: Հանրահայտ այս ճշմարտությունը, սակայն, չի բավարարել հեղինակին, որը որոնել և իր կենսափորձով, անձնական օրինակի դիտարկումներով հայտնաբերել է թոքախտի առաջացման այլ պատճառներ, որոնք էլ հենց անմիջաբար առնչակցվում են հերոսի կենսագրությանն ու հայ իրակաությանը: Բացի նրանից, որ թե հերոսը, թե հեղինակը երկուսն էլ տառապել են ծանր թոքախտով և բուժվել են շուրջ չորս տարի, Դանիել Մուրն էլ է տեսնում Հիսուսի տեսիլքը և նրանով քաջալերվելով՝ հավատում իր փրկությանը:

Շեղինակը կարևորել է մեկ այլ հանգամանք. այն, որ թոքախտը, վարակածին լինելուց բացի, կարող է լինել և նախաբացիլային, կենսական հանգամանքների ու պայմանների ծնունդ, այսինքն՝ ո՛չ բացիլային: «Իրոք, թոքախտը յուրահատուկ մանրէներ ունի՝ ցուպիկանման թթվակայուն Կոխի բացիլներ,– գրել է նա: – Սակայն Դանիելը համոզված էր, որ **իր հիվանդությունը նախաբացիլային ծագում ուներ**, և զարմանում էր, որ հոգեկան ախտահարումը կարող է մարմնական հիվանդության պատճառ հանդիսանալ: Իհարկե, չէր կարծում, թե **իր հիվանդությունը զուտ մարմնական էր**, օրգանական տկարություն. նաև **կասկածում էր, թե այն կապված է հոգեկանի, ներքին խորհրդավորության կամ առեղծվածի հետ**:... Տեղյակ էր նաև, թե **իր միակ խնդիրն այն էր, ինչ բժիշկները «հուզական գործոն» էին անվանում**»<sup>4</sup>:

Հայտնի է, որ Լ.-Ջ. Սյուրմեյանն ինքը տասը տարեկանից ենթակա է եղել հենց այդ «հուզական գործոնի» ներգործությանը: Բռնագաղթի ու

3 Դանիելյան Ս., Միջուկի տրոհումը, գիրք Ա, Եր., 2011, էջ 280:

4 Սյուրմեյան Լ.-Ջ., 98, 6<sup>0</sup> ըստ Ֆորենհայթի, Եր., 2005, էջ 211-212 (այսուհետև սույն գրքից մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ – Ա. Մ.):

մահվան սարսափները, ծնողների և դասընկերների կորուստը, որբության դառնությունները, հարատև գրկանքները, ապրուստ վաստակելու համար զանազան նվաստացուցիչ աշխատանքներն իսկապես մաշել էին նրա մարմինն ու ներագդել հոգու վրա: Իսկ ահա հիվանդանոց – առողջարաններում հայտնված տարագրի մյուս հիվանդներն ախտահարված էին բժշկագիտությանը հայտնի ճանապարհով:

**Ուրեմն, իսկապես, հեղինակն իր հիվանդության ու ապաքինման պատմությունն է դարձրել վեպի նյութ՝ ունենալով ստեղծագործական լիակատար ազատություն նաև գեղարվեստական պայմանականության տարբեր ձևերի կիրառման մեջ:** Ուսումնասիրողները նկատել են, որ թեև հեղինակն ընտրել է իրականից տարբեր գեղարվեստական ժամանակ՝ դեպքերի ժամանակագրությունը 1920-ական թվականներից 1940-ական թվականներ տեղափոխելով, սակայն պահպանել է իր և հերոսի նույն տարիքը հիվանդության և ապաքինման ամբողջ շրջանում: Այսինքն՝ նախատիպը՝ Սյուրմեյան – հայ մարդը նույնպես հիվանդ է եղել 20 – 21 տարեկանում և բուժվել 25 – 26-ում, ինչպես վեպի հերոս Դանիել Սուրբ:

Ինքնակենսագրական – հոգեբանական այս վեպն արտաքուստ պարզ, բայց իրականում բարդ կառույց ունի. **պատումը** կամ հեղինակի եզրաբանությամբ՝ **պատմությունն** առաջ են մղում **կամ** հեղինակ – պատմողի խոսքը՝ երրորդ դեմքով, որն էլ հաճախ վերածվում է հերոսի կամ հերոսների առաջին դեմքով ներքին մենախոսության, ինչը, որպես ուղղակի խոսք, բերվում է չակերտների մեջ, **կամ** նրա և ուրիշ հերոսների միջև կայացած երկխոսությունները, որոնք հրաշալիորեն ներդաշնակում են վիպական ընդհանուր հյուսվածքին: Իր այս հատկանիշով էլ է «98,6<sup>0</sup>»-ը տարբերվում Սյուրմեյանի ինքնակենսագրական մյուս վեպերից, անգամ «Ձեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք»-ից: Ահա ինչու այս երկի ժանրը բնորոշելիս հակված ենք այն ինքնակենսագրականի հետ միասին անվանելու հոգեբանական – «ներսուզական» վեպ:

Արտաքուստ թվում է, թե վեպում կյանքի նեղ շրջանակ է պատկերվում թոքախտաբուժական հինգ կլինիկաներ կամ հիվանդանոց – առողջարաններ Համիլտոնում, Լանքաստերում, Սիերա Վիստայում, Մարենգոյում և Սանվյուում: Տարբեր ազգերի բժիշկների և հիվանդների փոխհարաբերություններ, բուժման հին ու նորահայտ եղանակներ: Մակայն մահվան դեմ պայքարում մարդու հաղթանակն ուրվագծվում է կենսական միջավայրի, կենսաբանական անձի մարդկային որակների, մտավոր ունակությունների և զգացմունքային աշխարհի լայն ընդգրկումով, կամքի ուժի և ապրելու հավատի հոգեբանական հետաքրքիր բացահայտումներով, որով էլ վեպը ձեռք է բերում գեղարվեստական անուրանալի արժեք՝ որպես հայկական համամարդկայության բարձր դրսևորումներից մեկը:

Մակայն արդարությունը պահանջում է ասել, որ այս վեպը, գոնե հայ իրականության մեջ, Սյուրմեյանի նախորդ վեպի բուռն ընդունելությանը չի արժանացել, և քննադատական միտքն էլ պատշաճ խորությամբ չի դիտարկել ու արժևորել այն: Կցկտուր տվյալները, որ հաղորդել է գրողի վերջին տարիների մտերիմ ու կտակարար Թ. Փոստաջյանը, պարզապես

ԳՐԱԿԱՆ ԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
Ե (ԺԱ) ԳՄԱՐԻ, ԹԻՎ 1 (41) ԽՈՍԿԱՐ-ՄԱՍՔՐ, 2013  
ՎԷՄ՝ ԽԱՄԱՆԿԱՅԻՆ ԿԱՆՈՒՆ

բավարար չեն այս խորունկ երկի բովանդակային ընդերքն ըմբռնելու և գեղարվեստական յուրահատկությունները արժանավորապես գնահատելու համար: Թ. Փոստաջյանը բերել է միայն շոշափելի, արտաքնապես նկատելի տեղեկություններ հեղինակի և նրա կերպարը մարմնավորող Դանիել Մուրի, վերջինիս ծանր թոքախտավոր լինելու, կամքի վիթխարի ուժով մահվան դեմ մաքառելով՝ գրեթե անբուժելի հիվանդությունը հաղթահարելու մասին: Սակայն նույն Թ. Փոստաջյանը նաև հավելյալ կարևոր տեղեկություններ ու կենսագրական մանրամասներ է հաղորդել, որոնք հնարավոր են դարձնում ճիշտ կողմնորոշումը վեպի կենսական ակունքների բացահատման ճանապարհին: Այսպես ենք ասում, որովհետև առայժմ միայն նրան են հայտնի Լ.–Ջ. Սյուրմեյանի և հոլիվուդյան հռչակավոր դերասանուհի Լինդա Դարնելի սիրո պատմությունը, վերջինիս ողբերգական մահվանն առնչվող բոլոր մանրամասները: Դերասանուհուց Լ.–Ջ. Սյուրմեյանի ստացած շուրջ 100 էջ կազմող և կարևոր արժեքներ կայացնող անձնական նամակները, ինչպես նաև «Սրտի գաղտնիքը» վեպը, ցավոք, դեռևս հրապարակված ու մեկնաբանված չեն:

Սա է այն կենսանյութը, որը, չգիտենք ինչ համամասնությամբ, ընկած է թե՛ «98, 6<sup>0</sup>» և թե՛ «Սրտի գաղտնիքը» (Secret Heart) վեպերի հիմքում<sup>5</sup>:

Անկասկած է, որ դիտարկվող վեպն ինքնակենսագրական բնույթ ունի և պատկերում է հեղինակի՝ թոքախտով ծանր հիվանդանալու և մահվան դեմ մաքառելով՝ բուժվելու պատմությունը: Իսկ որ այն իր սյուժեի որոշ մասով կապված է նաև դերասանուհի Լ. Դարնելի և Լ.–Ջ. Սյուրմեյանի հոլիվուդյան շրջանի կենսագրությանն առնչվող այլ անձնավորությունների հետ, կարող է հավաստել նաև մեր հետևյալ դիտարկումը:

Մեզ այնպես չի թվում, թե պատահական զուգադիպություն է վիպական երկու հերոսների՝ **Դանիել** և **Վանդա** անունների ընտրությունը: Կարծում ենք՝ դրանք անմիջական առնչություն ունեն **Լինդա Դարնել** անվանը. անհավանական չէ, որ **Դարնել**-ից կարող էր **Դանիել** ստեղծվել, իսկ **Լինդա**-ն և **Վանդա**-ն հնչողությամբ բավական մոտ են: Ու թեև նախատիպերի և կերպարների միջև առկա են կենսագրական որոշակի ընդհանրություններ, այս վարկածը դեռևս լրացուցիչ հիմնավորումների կարիք ունի:

Ինչպես նշեցինք՝ «98, 6<sup>0</sup> ըստ Ֆորենհայթի» վեպի հեղինակն արդեն վաղուց կատարյալ ամերիկացի էր և, որպես անգլերեն լեզվի ու ամերիկյան գրականության պրոֆեսոր, ամերիկյան բուհերում իրենց մայրենի լեզուն ու գրականությունն էր սովորեցնում ապագա մասնագետներին:

<sup>5</sup> Հավանաբար ինքնակենսագրական է նաև դեռևս անտիպ «Սրտի գաղտնիքը» (Secret Heart) վեպը, որի վրա հեղինակն աշխատել է իր կյանքի վերջին քսան տարիներին: Նրա առայժմ միակ ընթերցողի՝ Թ. Փոստաջյանի վկայությամբ՝ Լ.–Ջ. Սյուրմեյանը վեպը խմբագրում-փոփոխում էր անընդհատ, որ համապատասխանեցնի հրատարակչական գործակալների պահանջներին: Երկրորդ մասը, ըստ նրա վկայության, ունի ընդգծված հայկական բովանդակություն և լայն ազգային ուղղվածություն: Ըստ վեպի դիպաշարի՝ Ամերիկայում ազգությամբ հայ մի երիտասարդ սիրահարվում է մի նշանավոր դերասանուհու: Մերը փոխադարձ է, բայց նրանց ամուսնությունը, որը պիտի կայանար Հայաստանում՝ Սբ. Էջմիածնում, տեղի չի ունենում, որովհետև խորհրդավոր հանգամանքներում դերասանուհին սպանվում է: Սա էլ ակնհայտորեն կապված է Լ. Դարնելի հետ: Տես **Լ. Ջ. Սյուրմեյանի** «98, 6<sup>0</sup> ըստ Ֆորենհայթի» վեպի համար Թ. Փոստաջյանի առաջաբանը, էջ 22:

Համաշխարհային պատմության, փիլիսոփայության ու հոգեբանության, լայն առումով՝ հասարակագիտության, մանավանդ արվեստի և գրականության իր իմացությունների ահռելի պաշարի հետ միասին, հեղինակն ուներ ժամանակակից ամերիկյան իրականության հրաշալի ճանաչողություն, որը դրսևորված է վիպական ամբողջ հյուսվածքում: Ավելին, չլինելով բժիշկ՝ Լ.-Զ. Սյուրմեյանը վեպում ներկայացրել է բժշկագիտության, մանավանդ իր հիվանդության պատմությունը և այն ուսումնասիրող գիտաձյուղին վերաբերող բոլոր կարևոր մանրամասները, այն էլ՝ մասնագիտական խորությամբ ու բժախնդրությամբ: Այդ ամենն արվել է, որպեսզի գեղարվեստական խոսքն ունենա համոզություն և առավելագույն արժանահավատություն: Իր իսկ եզրաբանությամբ՝ կյանքի այս «քառուրդ» վիպական ձևի մեջ կարգաբերված ներկայացնելու համար հեղինակը պիտի հանդես բերեր նոր մոտեցումներ, կիրառեր վիպելու արվեստի այլևայլ գաղտնիքներին տիրապետելու իր ողջ հմտությունը: Իսկ այդ խնդրում Լ.-Զ. Սյուրմեյանն իրոք բացառիկ էր, որովհետև նա, որպես արձակագիր ու հրապարակախոս, կատարելապես տիրապետում էր համաշխարհային մեծության վարպետների ստեղծագործական փորձին, գրական նորագույն տեխնիկային, նրա մեջ միավորված էին հանդես գալիս գրող-արվեստագետն ու գրականության հզոր տեսաբանը:

## 2. Տեսությունը՝ գեղարվեստին համաքայլ

Լ.-Զ. Սյուրմեյանի «Արձակի տեխնիկա. չափ և խենթություն»<sup>6</sup> գրքում, որոշ շեղումներով հանդերձ, գրականագիտական հասկացությունները գործածվել ու ներկայացվել են համընդհանուր ճանաչման եզրաբանտերմիններով, իսկ շեղումների վերաբերյալ առկա են թարգմանիչ Ա. Արսենյանի ծանոթագրությունները: Այդպիսիք են, օրինակ, տեսարանը, ամփոփումը, պատմությունը, հայտնագործությունը, պատմության և դրվագային կամ համապատկերային սյուժեի հարաբերակցությունը, պարզ, բարդ և կայուն, գլխավոր ու երկրորդական կերպարների ու գործողության հարաբերակցությունը, պատմողի՝ առաջին կամ երրորդ դեմքի խնդիրը, սյուժեի քառուրդ կարգաբերող **անձնավորված ամենագետի** (այսինքն՝ հեղինակի), **անանձնավորված ամենագետի** այսինքն՝ գրող-արվեստագետի դերի ըմբռնումը և այլն:

Վեպի վերլուծությունը չենք կամենում հարմարեցնել կամ ենթարկել հեղինակի տեսական աշխատության տրամաբանությանը, թեև իր համոզումները, ահռելի իմացությունների հետ միասին, նա ձգգրտել է սեփական ստեղծագործական փորձով: Ուստի չենք էլ կարող շրջանցել կամ անտեսել նրա դիտարկումներն ու ընդհանրացումները, առանց որոնց դժվար ընկալելի կդառնա վիպական այս բարդ ու հետաքրքիր, միաձույլ հյուսվածքը թե՛ կառույցի, թե՛ գեղարվեստական յուրահատկությունների բացահայտման ու արժևորման իմաստով: Այսպես, ամեն

<sup>6</sup> Սյուրմեյան Լ.-Զ., Արձակի տեխնիկա. չափ և խենթություն, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հր., Եր., 2008, 334 էջ:

մի վիպական երկ ունի սկիզբ (էքսպոզիցիա), հանգույց, բախում, որ ենթադրում է հերոսների մասնակցությամբ գործողությունների զարգացման ընթացք և ամփոփում:

Այժմ տեսնենք՝ ինչպես է Լ.-Զ. Սյուրմեյանն սկսել իր վեպը և ընթերցողին նախապատրաստել վիպական գործողության զարգացման ընթացքն ընկալելուն:

Նախ՝ հեղինակ-պատմողը երրորդ դեմքով ներկայացնում է իր հերոսին, որը թոքախտի զարգացման վերին փուլում է և գտնվում է ապրել-մեռնելու սահմանային վիճակում: Քոլեջը դեռ չավարտած՝ 20 – 21 տարեկան հերոսը, մահվան դեմ հանդիման կանգնած, առողջությունը կորցնելուց հետո է միայն մտածում նրա մասին, ինքնավերլուծությամբ քննում մարդու ձակատագիրը՝ ոչ որպես աստվածաբանական կամ փիլիսոփայական հասկացություն, այլ սարսափելիորեն անմիջական խնդիր (էջ 37): Այստեղ, ինչպես և ամբողջ վեպում, երրորդ դեմքով պատմողի խոսքը երբեմն ընդմիջվում է Լ.-Զ. Սյուրմեյանի հերոսի՝ առաջին դեմքով ներքնասույզ մենախոսությամբ: Այդպես է և մյուս հերոսների պարագայում:

Իրավիճակն այնպիսին է, որ ռենտգենյան կաբինետի բուժքույրն իսկ հարմար չի համարում ուսանող հիվանդին անձամբ հաղորդելու նրա վիճակի մասին ողբերգական տեղեկությունը և փակ ծրարով նրան է հանձնում սոսկալի հիվանդությունը գուժող տեղեկանքը. «...**երկու թոքում էլ երևում է պալարախտի անսխալ առկայություն, կա ինֆիլտրատիվ սահմանափակ ախտահարում աջ թոքի վերին բլթում, որտեղ երևում է 3 x 2 սմ չափսի խոռոչ, որի մեջ առկա է հեղուկի մակարդակ: Ամբողջ աջ թոքի հյուսվածքը՝ զագաթից մինչև հիմքը, բազմատարր է: Անվիճելի ակտիվ պալարախտ է՝ զարգացման վերին փուլում**» (էջ 25, ընդգծ. բնագրինն է):

Իր այս գրեթե անհույս վիճակի, դրա ողբերգական հետևանքների ամբողջ բարդությունը խորությամբ զգացող ու գիտակցող, մահվան դեմ հանդիման կանգնած հերոսը՝ ծայրահեղ անհուսության ու անկարեկից միայնության դատապարտված, բնականաբար, հայտնվում է իր մեջ ներսուզվելով՝ մռայլ խոհերի թակարդից ելք որոնողի դերում: Մտքերի և զգացմունքների դրամատիկ հոսքն ուղղվում է նրա վրա. ինչ է կյանքը, ինչ է մահը, ինչն էր իր կյանքի ձամփան այսքան կարճ, ինչն է Աստված մարդուն տալիս գեղեցկություն ու երջանկություն և անմիջապես խլում նրանից՝ չթողնելով ապրել ու վայելել:

Այսօրինակ հարցերի պատասխանները որոնելիս ցավախեղ հերոսը պատկերացնում է իր ներսում վխտացող թոքախտի միլիոնավոր բացիլների քայքայիչ գործունեությունը մինչև մահ և մահվանը հաջորդող որոշ նատուրալիստական պատկերներ՝ ընդհուպ հողի տակ փտող մարմնի վերջնական քայքայումը: Իսկ դա հաստատ լինելու էր որպես Շեքսպիրի ասած «քաղաքակիրթ որդերի» մի ամբողջ ոհմակի աշխույժ գործունեության հետևանք: Իրավիճակն է նրան մղում կյանքի-մահվան առեղծվածի ու ժամանակի մասին ծանր մտորումների. «Մի բան հաստատ է: Ինքը փտելու է հողի տակ: Զգալու է իր վրա լցվող հողը, թիերով նետվող հողի



բութ թմկոցը, գերեզմանի խոնավությունը, հոտը, որդային պաղ սարսափը... Երբ այլևս չեմ լինի, սա (նկատի ունի գարդասեղանի ժամացույցը – Ա. Մ.) շարունակելու է տկոտկալ: Ժամանակը երբեք կանգ չի առնում, ժամանակը չի հոգնում: Ժամանակը մահվան ձեռքն է: Հավաքում է բոլորին աշնան տերևների նման ու սրբում-տանում է երկրի երեսից... Ժամանակը մահաչափի նման հաշվում է նրա երկրային կյանքի վերջին ժամերը: «Մտածեց. «Մարդիկ գնում են ժամանակի հոգեհանգստյան թմբկազարկերին համաքայլ, մի մասն՝ ուրախ, մյուսները՝ տխուր, մեկը՝ ծիծաղելով, մյուսն՝ արտասովորով, մի մասը տեսնում է, մյուսները կույր են, սակայն բոլորը միասին շարժվում են ժամացույցի համաչափ տկոտկոցի տակ, խամաճիկներ, որոնց թելերը մութ ձեռքում են մահվան՝ ամենազոր խեղկատակի» (էջ 38):

Որպես բանական արարած՝ Լ.–Ջ. Սյուրմելյանի վեպի հերոսը խորհում է նաև թոքախտի առաջացման պատճառների մասին և չի գոհանում վերջինիս ծագման ու որպես վարակ տարածման բժշկագիտական բացատրություններով: Թոքախտը պարզապես հնձում էր Համիլտոն քաղաքը, ուր ապրում էր Դանիել Մուրը: Սյուս քաղաքներից սա առանձնանում էր մահվան հաճախությամբ, մահազդերի չտեսնված առատությամբ ու «դագաղագործների գերիշխանությամբ», ցավալի իրողություն, որն ավելի էր թանձրացնում հուսահատությունն ու վեպի հերոսին հարկադրում անվերջ մտորելու մահվան մասին: «Ինչո՞ւ եմ ամբողջ օրը մահվան մասին մտածում,– գրել էր օրագրում: –Հանկարծ պարզեցի, որ մի տարօրինակ զգացում ունեմ. իբր այլևս Դանիել Մուրը չեմ, բոլորովին ուրիշ մարդ եմ, և այդ մարդն ինձ վախեցնում է: **Եղել է՝ հիվանդացել ու ապաքինվել ես. այս անգամ էլ հաստատ ապաքինվելու ես: Հիմարություններիդ վերջ տուր: Հերիք է խավարի մեջ խարխափես: Իրերը տես այնպես, ինչպես կան: Տրամաբանիք և վերագտիք ինքնությունդ: Մեջքդ ուղղիր: Քիթդ վեր բարձրացրու: Դու Դանիել Մուրն ես» (էջ 31, ընդգծ. մերն են – Ա. Մ.):**

Այս ինքնահուսադրող խոսքը հերոսին տրամադրում է մի անբեկանելի վճռականությամբ: Ինչպես մահվան ճանապարհին ապրելու անսասան հավատով մաքառող նախորդ՝ «Ձեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք» վեպի հերոսը, այնպես էլ «98, 6<sup>0</sup> ըստ Ֆորենհայթի» վեպի Դանիել Մուրը որոշում է հանուն կյանքի և ընդդեմ հուսահատության ծրագրված ու նպատակապաղ պայքար սկսել. «Երբ զգայարանները վերակենդանացան, մտածեց. «Մա վերջն է»: Տառապանքի լուռ ճիչը բռնեց կոկորդը, նաև արյունը, որ դուրս բխեց արագորեն: Բողոքի և հուսահատության հազարավոր չասված բառեր կորան – անհետացան շուրթերից, երբ արնաներկ թաշկինակով սրբեց բերանը: «**Ձեմ կարող մեռնել, իրավունք չունեմ**»,– գլուխը բարձր պահած և զգայացունց կեցվածք ընդունելով՝ կրկնում էր մտքում,– **պետք է պայքարեմ, պայքարեմ ու հաղթեմ**» (էջ 27 – 28, ընդգծ. մերն են – Ա. Մ.):

Այսպես է քսանմեկամյա հերոսը սկսում իր ուղին: Այսինքն՝ վեպի ամբողջ ընթացքի համար սկզբից ևեթ նա ունի գործունեության հստակ ծրագիր, որ պիտի իրագործի ներքին բարոյահոգեբանական ուժերի

ԳՐԱԿԱՆ ԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
Ե (ԺԱ) ԳՄԱՐԻ, ԹԻՎ 1 (41) ԽՈՒՎԱՐ-ՄԱՐՏ, 2013  
ՎԷՄ՝ ԽԱՄԱԿԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՐԷՆ

գերլարումով, համառ ու հետևողական նպատակասլացությամբ:

Հիվանդությունը վաղուց էր կեղեքում վեպի հերոսին, սակայն այստորոշումը նոր էր հաստատվում ռենտգենյան կիկլոպյան ճառագայթներով զննումից հետո: Դրա վկայությունը վեպի հենց առաջին գլխում ներկայացվող, մի քանի շաբաթ ժամանակ ընդգրկող օրագիրն է՝ միակ վստահելի ու գաղտնապահ ընկերը, որ գրառվել էր 1944 թ. հոկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 1-ը:

Ահա և վերջին գրառումն այդ օրագրում. «Նման եմ տիեզերքում միայնակ մնացած մարդու: Մարմնական ցավից ու հիվանդությունից ավելի սոսկալի է: Հիմա հասկանում եմ, թե Քրիստոսն ինչ էր զգում, երբ խաչի վրայից բարձր ձայնով գոչեց ու սասց՝ «Աստված իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ»» (էջ 35):

Ի դեպ, Քրիստոսի կերպարը և նրանով՝ թաղման և հարության արքե-տիպը որպես հանրության մեջ արմատացած համընդհանուր գիտակցու-թյան դրսևորում, հաճախ է հիշվում Լ.-Ջ. Սյուրմեյանի թե՛ բանաստեղ-ծություններում, թե՛ վիպական ստեղծագործությունների մեջ, իսկ այս վեպում՝ տարբեր դրվագներում, և դա միանգամայն բնական է: Չպետք է մոռանալ, որ մանկության ու վաղ պատանեկության տարիներին հեղի-նակը ոչ միայն հոգևոր կրթություն է ստացել, այլև, ինչպես «Ձեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք» վեպի քննարկման ընթացքում տեսանք, մասնակցել է հոգևոր-ծիսական արարողությունների, հաճախել Մխի-թարյան վարժարան, որտեղ Աստվածաշունչն ու կրոնի պատմությունը դասավանդվող հիմնական առարկաներ էին: Այնպես որ, Հիսուսն իր հրաշագործություններով, իր բովանդակալից ու կենսախորհուրդ առակ-ներով, հանուն մարդկային ցեղի փրկության հանձն առած կամավոր ինքնագոհաբերությամբ ու գիտակցված նահատակությամբ, նաև՝ հրա-շալի հարությամբ ոչ միայն հավատի անսպառ աղբյուր ու անսասան հենարան էր բոլոր քրիստոնյա հավատացյալների համար, այլև գթասր-տության, վեհի և կատարյալի բարձրագույն օրինակ, որ վաղ ման-կությունից կարող էր ներգործել մահվան բովով ու չարչարանքի քառու-ղիներով անցած որբ մանուկների հոգեբանության վրա: Սա է պատճառը, որ բոլորն էլ համակրանքով ու անտրտունջ ընդունում էին հայր Վիդալին, քրիստոնեական բարեպաշտության նրա հորդորները և խոհեմաբար «լռում» էին Աստծու և հանդերձյալ ապառնիի վերաբերյալ իրենց կասկած-ների մասին: Մի իրողություն է սա՝ աթեիստական դաստիարակություն ստացած մարդկանց համար անհասկանալի, անըմբռնելի և անթույլա-տրելի: Հենց այս պատճառով է ոմանց թերահավատությունը Լ.- Ջ. Սյուր-մեյանի՝ մահվան դեմ ոգորումների պահին հայտնված Հիսուսի, վեպի հերոս Դանիել Մուրի փրկչական տեսիլքի և այդ առթիվ նրա զգայություն-ների և ապրելու կենսահաստատ հավատի հանդեպ. **«Լինել հմայիչ, կատարյալ ու հաղթական, ինչպես Քրիստոսն է, որ մարդկանցից ամենահմայիչը, ամենակատարյալն ու ամենահաղթականն է, իսկ ինքն ամենամոտն է Քրիստոսին. տարիներ շարունակ սա է եղել նրա չարտահայտած երազանքն ու հավատամքը: Դեռևս փայփայում էր բաղձալի տեսիլքները, որ ծնվել էին տղայական ուղեղում, և**

համոզված էր՝ խորն էին արմատակալել հոգում, ինքնության նվիրական տենչերն էին, Դանիել Մուրի էությունը: Համոզված էր, որ տարբերվում է շատերից, և այդ տարբերությունն իր ամենասերտ կապվածությունն էր նրանց» (էջ 287, ընդգծ. մերն են - Ա. Մ.): Դյուրությամբ կարող ենք համադրել հեղինակի կենսագրության համապատասխան դրվագներին և համոզվել, որ սա նաև Լ.-Զ. Սյուրմեյանի էությունն է: Իսկ սա ոչ թե պատահականություն կամ զուգադիպություն է, այլ հեղինակի և հերոսի կենսագրության մի կարևոր դրվագի գրեթե նույնություն:

Վեպում զուգադրված են թոքախտավորի միևնույն ճակատագրով դատապարտված, ծայրահեղ վիճակում հայտնված մարդկանց տառապալից կյանքն ու ապրելու ձգտումը. նրանց միակ հենարանը ոչ թե հիվանդանոց - առողջարաններում բուժման անվախճան թվացող ձանձրալի ընթացքն է, այլ փրկության վերացական հույսը, որին ամենածայրահեղ պահերին կառչում էին կյանքի ու մահվան սահմանագծում հայտնված բոլոր հիվանդները. «Օրերն անցնում էին բանտային գորշ միապաղաղության մեջ: Մահն իր մռայլ ոստայնն էր գործում. թոքախտի բացիլը դժոխքից ծնված մահաբեր սարդ է: Ապրում էր իրականի և անիրականի արանքում, գոյության կիսախավար գոտում, որ, կարծես, հսկայական սառած քարանձավի ստորոտում էր... Գիշերները Դանիելը մոլորվում էր, կորչում բևեռային ծովերի մշուշոտ ամայության խորխորատներում: Մառցե ամայության մեջ գոյատևելը հենց մահն էր: «Հանգիստ» կամ «թուլացում» չէր, այլ դիակային փայտացմանը սահմանակից վիճակ: Անկողինը գերեզման էր, ինքն արդեն թաղված էր: Հիվանդասենյակում գիշերները մահճակալների փոխարեն շիրիմներ էին, քիչ էր մնում ճշար գերեզմանային սարսափից» (էջ 79 - 80, ընդգծ. մերն են - Ա. Մ.):

Հիմնականում՝ անբուժելի հիվանդության ճիրաններում, իրոք սահմանային վիճակում հայտնված տառապյալների համար բուժումը դեռևս առողջանալու լիարժեք երաշխիք չէր կարող լինել: Այս պատճառով էլ հիվանդներն իրենց երբեմն թույլ էին տալիս արգելված պտուղ վայելողի գիտակցությամբ ճաշակելու իրենց անհուսալի վիճակին անհարիր հաճույքներ, զվարճություններ, սեր, երջանկության ձգտում և անգամ՝ ամուսնություն, որը նույնիսկ մահացու ելքով կարող էր ավարտվել ոմանց համար: Դրա վկայությունն են առողջարան - հիվանդանոցներից դուրս գրված նախկին հիվանդների կազմակերպած խնջույքների, սիրո և վայելքի դրվագների, գրականության և արվեստի տարբեր խնդիրների, այն ժամանակներում Հոլիվուդում նկարահանված ֆիլմերի, հանրահայտ դերասանների խաղի քննարկումներն ու արժևորումները: Այս երկում կան այդպիսի մի քանի սյուժետային օժանդակ գծեր, որոնք ունենում են վիպական մթնոլորտին բնորոշ հանգուցալուծում:

Բնավ պատահական չեն հեղինակի հոլիվուդյան հիշողությունները և դերասանների մարդկային հարաբերությունների պատկերումները, որոնք անմիջականորեն ակնարկում են իր սիրավեպերը: Իսկ ծագումով ֆրանսիացի Սեսուր Գրիմարի և իտալացի Ջուզեպպե Նարդինիի միջոցով

ԳՐԱԿԱՆ ԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
Ե (ԺԱ) ԳԱՐԻ, ԹԻՎ 1 (41) ԽՈՒՎԱՐ-ՄԱՍՊՐ, 2013  
ՎԷՄ՝ ԽԱՆՏԻՎԱԿԱՆ ԽԱՆՏԵՆ

ներկայացվում է Ամերիկայում հայտնված այլազգիների աստիճանական ամերիկանացման գործընթացը, որն անմիջաբար հենց իրեն՝ հեղինակին էր վերաբերում. «Թե Գրիմարը, թե՛ Նարդինին, թեև ամերիկանացած, սակայն դեռևս բավականաչափ օտարերկրացի էին, որպեսզի Դանիելը նրանցից Եվրոպայի համն ու հոտն առներ և ընդլայներ մտահորիզոնը: Նրանց ներկայությունը տնակում որոշակի աշխարհաքաղաքական մթնոլորտ էր ստեղծում: Առողջարանը, կարծես, Միավորված ազգերի կազմակերպություն լիներ: Փաստորեն Դանիելն առաջին անգամ էր մոտիկից շփվում արտասահմանում ծնվածների հետ, ականատես էր լինում արմատական փոփոխությունների ընթացքին» (էջ 177):

Տարբեր միջավայրերն ու իրավիճակները դառնում են քսանմեկամյա հերոսի նոր հոգեբանության ձևավորման խթանիչներ: Հիվանդության երկարատև բուժումն ընթանում էր փուլերով, և տարբեր գործոններ էին նպաստում նրա առողջացմանը: Քաղաքից քաղաք և բանտանման հիվանդանոցից հիվանդանոց տեղափոխվելիս ապրում էր ազատության հաճելի զգացումներ, և նրան այնպես էր թվում, թե ազատվել է մահվան շարասյունից և այլևս այսինչ կամ այնինչ թվով համարակալված նախկին կալանավորը չէ, ու հեռու չէ լիակատար ազատության մեջ հայտնվելու երազանքի իրականացումը:

«Թոքախտի բուժման պատմությանը նվիրված հետաքրքիր գիրք կարդալիս երագում էր բժիշկ դառնալ,- ներկայացրել է հեղինակն իր հերոսին: -Մտածում էր՝ լավ բժիշկ կլինեմ, թեև անկարող էր դիակ հերձել: Իրեն համոզում էր, որ, ի վերջո, բժշկությունը մեծագույն մասնագիտություն է» (էջ 351): Այսպես էր իրեն համոզում հեղինակ-հերոսը՝ վերհիշելով բժշկագիտության զարգացման ողջ ընթացքը՝ Անտիկ աշխարհի հին հույներից սկսած մինչև իր օրերը. մտովի տեսնում էր Ալեքսանդրիայի գրադարանի 700000 գրքերը, Ցիցերոնին ու Հիպոկրատին, նրանց աշխատությունների մեջ խորացած հին աշխարհի, միջնադարի մյուս բժշկապետերին, որոնցից շատերը մահացել էին հենց թոքախտից, թոքախտի ցուպիկը հայտնաբերած Կոխին, ճառագայթը հայտնագործած Ռենտգենին և սրանց կողքին՝ անհաշվելի այն մահկանացուներին, որոնց մահվան պատճառ էր դարձել այդ չարաբաստիկ հիվանդությունը (տես էջ 351 - 352):

#### **Այս խորհրդածությունները նույնպես բնական են և ինքնակենսագրական բնույթ ունեն:**

Լոս Անջելեսի համալսարանում, սակայն, Դանիել Մուրը խորանում էր պատմագիտության մեջ, թեև նախընտրում էր բժշկի ամենամարդասիրական մասնագիտությունը: Պատճառն այն էր, որ անձնապես խորշում էր դիահերձումից:

Բուժման ընթացքը շարունակական էր, և դրան նպաստող գործոններից էր ընթերցարությունը. հաճույքով կարդում էր զանազան պատմագիտական, գեղարվեստական, փիլիսոփայական, աշխարհագրական գրքեր, ինքնամոռացման ու իրականությունից մտովի փախուստի պահերին հրապուրվում էր «Բախի թախծոտ երաժշտությունը հիշեցնող» Շոպենհաուերի փիլիսոփայությամբ: Սակայն կազդուրող բոլոր գործոն-

ների մեջ առանձնապես կարևորվում են «սիրային գործերը, նախ՝ Սիերա-Վիստա առողջարանում Միլդրեդի, ապա և՛ Լոս Անջելեսի համալսարանում ուսանելիս Վանդա Մորգանի հանդեպ դրսևորած սիրո բուռն զգացմունքները, որոնք բարձր արվեստով մարմնավորված են վեպի էջերում:

Վանդա Մորգանի նկատմամբ Դանիել Մուրի զգացմունքները պատկերելիս ակնարկվում են Լ.-Զ. Սյուրմեյանի և Լինդա Դարնելի իրական անձնական հարաբերությունների որոշ դրվագներ: Թեկուզ և այն իրողությունը, որ հեղինակն իր արժանապատվության համար նվաստացուցիչ համարելով՝ մերժել էր մեծահարուստ հմայիչ դերասանուհու հետ տնփեսա լինելով ամուսնանալու հնարավորությունը, զգալիորեն համընկնում է վեպում Վանդայի և Դանիելի հնարավոր ամուսնության չկայացման պատմությանը: Զգացմունքների փոխադարձությունն ակնբախ էր: Կայացավ և ամուսնանալու հնարավորության քննարկումը, որը, սակայն, չավարտվեց փոխադարձ համաձայնությամբ:

Անխուսափելի բաժանումը երկու պատճառ ուներ. նախ՝ Դանիելի հրաժարումից հետո Վանդայի կյանքում հայտնվել էր ուրիշ տղամարդ, երկրորդ՝ Դանիելը, ինչպես Լ.-Զ. Սյուրմեյանը Դարնելի ամուսնությունից հետո, նրա երջանկությունը չխաթարելու համար սառնասրտորեն խզեց բոլոր կապերը թանկ ու սիրելի էակի հետ:

Վեպի կուռ կառույցն ունի տպավորիչ ավարտ. սյուժեի հիմնական և օժանդակ ձյուղավորումները ստանում են տրամաբանական հանգուցալուծում: Հաղթում են մարդկային կամքն ու բանականությունը, հիվանդությունը նահանջում է, թոքերի խոռոչները սպիանում են՝ Դանիել Մուրին վերադարձնելով նրա երազած մարդկային առողջությունն ու երջանկությունը:

«- Պարոն Մուրը շատ կարգապահ հիվանդ է,- ասաց հերթապահ բուժքույրը:

- Ուրախ չեմ,- հարցրեց բժիշկ Զեմիսոնը:

- Փորձում եմ հասկանալ, որ չորս տարի բուժվելուց հետո վերջապես առողջ եմ:

Կարծում եմ՝ շնորհիվ կատարյալ կամքի ուժի ապաքինվեց,- Դանիելին ժպտալով՝ հերթապահ բուժքրոջը դիմեց բժիշկ Զեմիսոնը» (էջ 360-361):

Իրոք որ, «անհնարինն իրականություն էր դարձել». մահվան դժոխքից ազատված Դանիել Մուրին կանչում էր նոր կյանքն իր հրապույրներով:

Ճիշտ այդպես էր մահվան ճիրաններից ազատվել գրողն ինքը և իր՝ «գոռոզ հայի» ազգային հպարտությունը պահպանելով՝ հաստատվել ամերիկյան իրականության մեջ:

## Summary

### **AS A MIRROR OF THE ARMENIAN ENGLISH-SPEAKING WRITER'S BIOGRAPHY**

Leon Zaven Surmelian's "98.6°"

Arpi S. Muradyan

The novel of L. Z. Surmelian "98.6°" that we are going to discuss in this article has been published in the USA in 1950, and in Armenian – in 2005, in Yerevan by Aram Arsenyan's translation. The title implies human body's normal temperature, and the novel is the artistic reflection of the writer's illness and the process of his painful treatment of four years.

Practicing literary criticism's contemporary achievements and making synthetic analyses of some facts of writer's biography, the author of the article substantiates that despite the absence of Armenian entourage and Armenian characters, the novel is psychological – autobiographical by its genre. The novel's central character – Irishman Daniel Moore's prototype is the author himself, who has been in some marginal existential state, but overcame the death threat with stubborn commitment. The novel's structure, actions, the systems of characters and images performing them, artistic peculiarities are examined with the wide application of thesis of the author's theoretical work "Techniques of Prose: Measure and Madness".